ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/177

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20826-18 գրությամբ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Պատվիրատու) 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9021 գրության հիման վրա, 15.11.2018թ. թիվ 27/26-3/20826-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Փի-Սիէլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 13.12.208թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Փի-Սիէլեկտրոնիկս» ՍՊԸ-ն (այսուհետնա՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ.տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Փի-Սիէլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Փի-Սիէլեկտրոնիկս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, փոխարենը ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Փի-Սիէլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ինմասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնմանգործընթացիմիասնականկանոններովմրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակայինևոչխտրականհիմունքներովկազմակերպում.

2)պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը հայտնել է, որ Դատական դեպարտամենտի ոչ իրավաչափ և անհասկանալի գործողությունների արդյունքում ստացվել է մի իրավիճակ, որ «Փի-Սիէլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, իսկ հաջորդիվ տեղ զբաղեցրած և ավելի բարձր գին առաջարկած Ընկերության կողմից առաջարկվող ապրանքը /մոդելը/, որը ունի նույն նկարագիրը, ինչև առաջին փուլով առաջարկվել է «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից, անհամապատասխանաություններ չի արձանագրվել, ավելին կնքվել է պայմանագիր /կցվում է/:

Ընկերությունը նշել է, որ կա միտում՝ «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մեջ, քանի որ նույն ապրանքն /մոդելը/ է առաջարկվել թե՛ «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի, թե՛ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից, բայց արդյունքում, ավելի ցածր գին առաջարկած «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, իսկ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի բավարարվել և կնքվել պայմանագիր:

Արդյունքում Դատական դեպարտամենտի անօրինական գործողությունների հետևանքով «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ոչ միայն զրկվել է մրցույթից, այլ նաև հայտնվել՝ գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու փաստի առջև:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները՝ «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին չվերագրել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>>:

«ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/177 ընթացակարգի շրջանակներում 21.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ով միջնորդել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրել ողջամիտ ժամկետ գործի նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ներկայացնելու համար:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9021 գրությամբ ներկայացրել է «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 21.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6-րդ արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակի, որի ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ, ներկայացնելու Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 9-րդ արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս տեխնիկական բնութագրում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ բացակայում է քարթրիջի առկայության, երկկողմանի տպելու հնարավորության և երաշխիքի վերաբերյալ տեղեկատվությունը:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ծանուցել է «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 02-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 3.11.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 10-րդ արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 4-րդ չափաբաժնի մասով մերժել է «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները,

փոխարենը ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20826-18 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 07.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9021 գրությունը և կից փաստաթղթերը, «ՓԻ Սի-Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի 13.12.2018թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի (այսուհետ՝ Օրենք) 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

2) ***հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին***, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները***: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:*** «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Այսպիսով, << դատական դեպարտամենտի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի թիվ 4-րդ չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

4	Լազերային տպիչներ	▪լազերային, ▪A4 ֆորմատի՝ մինչև 22 էջ/ր., ▪ տպելու խտություն՝ առնվազն 600x600 dpi, ▪հիշողություն՝ առնվազն 128 MB, ▪միացման տեսակը՝ HI_Speed USB 2.0, ▪ ամսական ծանրաբեռնվածությունը՝ մինչև 10000 էջ, ▪ քարթրիջ, ▪ քարթրիջի ռեսուրս՝ առնվազն 1600 էջ, ▪ պրոցեսորի արագություն՝ 600 MHz, ▪ երկկողմանի տպելու հնարավորություն, ▪ առաջին էջի տպման ժամանակահատվածը՝ 7.3վ., ▪անհրաժեշտ մալուխներ, ▪ համատեղելի՝ Windows 7,10 ՕՀ-երի հետ, ▪ երաշխիքը՝ 1 տարի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6-րդ արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ, ներկայացնելու Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

«ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից հայտի Հավելված 6.1-ով ներկայացվել է ***HP Laserjet pro M102a*** լազերային տպիչի ամբողջական նկարագիրը, որի մեջ չի նշվել քարթրիջի առկայության, երկկողմանի տպելու հնարավորության և երաշխիքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ծանուցել է «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 02-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունը:

«ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որպես ապրանքի տեխնիկական բնութագրի շտկում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է մեկ այլ ***SAMSUNG SL-M2820ND*** լազերային տպիչի ամբողջական նկարագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 3.11.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 10-րդ արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 4-րդ չափաբաժնի մասով մերժել է «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, փոխարենը ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից*** փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ***հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝***

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է***, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն պատշաճ կերպով ծանուցված լինելով Հավելված 6.1-ում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրված անհամապատասպանության մասին չի շտկել դրանք, այլ՝ ներկայացրել է նոր ապրանքի տեխնիկական բնութագիր, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժելով «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերվում է Ընկերության 13.12.2018թ. գրությամբ ներկայացված այն դիտարկմանը, որ Դատական դեպարտամենտի ոչ իրավաչափ և անհասկանալի

գործողությունների արդյունքում ստացվել է մի իրավիճակ, որ «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, իսկ հաջորդիվ տեղ զբաղեցրած և ավելի բարձր գին առաջարկած Ընկերության կողմից առաջարկվող ապրանքը /մոդելը/, որը ունի նույն նկարագիրը կնքվել է պայմանագիր, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Ընկերության կողմից վերը նշված փաստերը չեն կարող քննարկման առարկա հանդիսանալ սույն գործով, քանի որ ՍՑ-ԱՄ-2018/177 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գործի ելքով փաստական հանգամանք է հանդիսանում «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Փի-Սի Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի դրսևորած վարքագիծը:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20826-18 գրությամբ «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01849148) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**